Անձնագիր

ՀՀ ԱՆՁՆԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ

ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների միջոցով ՀՀ քաղաքացու անձնագիրը տրվում է՝

1. 16 տարին չլրացած ՀՀ քաղաքացիներին:
2. 16 տարին չլրացած ՀՀ քաղաքացիների անձնագիրը փոխանակելու դեպքում:
3. ՀՀ քաղաքացու 16 տարին լրանալու կապակցությամբ:
4. ՀՀ անձնագրի ժամկետը լրանալու, այլ պատճառով օգտագործման համար ոչ պիտանի լինելու կամ ՀՀ քաղաքացու ցանկությամբ ՀՀ անձնագիրը փոխանակելու դեպքում:
5. կորցրած ՀՀ անձնագրի փոխարեն նորը տալու դեպքում:
6. ՀՀ քաղաքացու անձնագրային տվյալների փոփոխության, գրառումների, անճշտության վերացման դեպքում:
7. ՀՀ քաղաքացի հանդիսացող անձանց նախկին ԽՍՀՄ համաքաղաքացիական կամ արտասահմանյան անձնագիրը ՀՀ քաղաքացու անձնագրով փոխանակելու կամ նախկին ԽՍՀՄ համաքաղաքացիական կամ արտասահմանյան անձնագրի կորստյան կապակցությամբ ՀՀ քաղաքացու անձնագիր տրամադրելու դեպքում:
8. Մինչև 2007 թվականի մարտի 24-ը ՀՀ քաղաքացիությունը սահմանված կարգով չդադարեցրած քաղաքացու անվավեր ճանաչված անձնագրի փոխարեն նոր՝ ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու դեպքում:

ՀՀ ԱՆՁՆԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

16 տարին չլրացած ՀՀ քաղաքացուն առաջին անգամ ՀՀ անձնագիր տալու կամ փոխանակելու համար հյուպատոսական հիմնարկ են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում ՀՀ անձնագիր ստանալու մասին,
2. 35x45 մմ չափսի 3 գունավոր նույնական լուսանկար,
3. Ծննդյան վկայականը և դրա լուսապատճենը,
4. Փոխանակելու դեպքում՝ ՀՀ քաղաքացու անձնագիրը և դրա նշումներ պարունակող էջերի լուսապատճենները
5. Ծնողների գրավոր համաձայնությունը՝ օտարերկրյա պետությունում վավերական անձնագիր ստանալու մասին: Ծնողներից մեկի բացակայության դեպքում՝ նաև բացակա ծնողի գրավոր համաձայնությունը՝ վավերացված նոտարական կարգով,
6. Թվարկվածներից մեկը կախված տվյալ դեպքից.
   ա) ծնողների ամուսնության վկայականը և դրա լուսապատճենը,
   բ) հայրության ճանաչման վկայականը և դրա լուսապատճենը,
   գ) միայնակ մայր լինելու վերաբերյալ տեղեկանքը և դրա լուսապատճենը,
   դ) մահվան վկայականը և դրա լուսապատճենը,
   ե) օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու վերաբերյալ դատարանի վճիռը և դրա լուսապատճենը,

7. Ծնողների անձնագրերի 2-5 էջերի լուսապատճենները։
8. վճարման անդորրագրի բնօրինակը։